ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-20/4»-1

ք. Երևան «24» փետրվարի 2020 թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բազարչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Բ.Թադևոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 808300 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»ՓԲԸ	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4	ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՎՀՀ՝ 00011624	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Բանկ՝«Հայէկոնոմբանկ»Արաբկիր մ/ճ	Հ/Հ 217002182558001
հ/հ 163058101441	ՀՎՀՀ 01210095
	Էլ. հասցեն՝ lawyer@c-e.am
	հեռ. (010)209777
Տնօրեն Ա.Բազարչյան	Տնօրեն Բ. Թադևոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«24» փետրվարի 2020 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-20/4»-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	33691166/1	Ampicillin 2 µg	Lioflchem	Հակաբիոտիկային սկավառակներ ներծծված ampicillin 2 µg հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար: Ֆորմատը՝ քարթրիջ: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ: Եվրոպական արտադրության ,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
2	33691166/2	Amoxicillin 10 µg	Lioflchem	Amoxicillin 10 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար: Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ: Եվրոպական արտադրության ,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	Հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
3	33691166/3	Amoxacilln/clavulanic acid 30 µg	Lioflchem	Amoxacilln/clavulanic acid 30 µg Հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի անտիբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար: Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
4	33691166/4	aztreonam 30 µg	Lioflchem	Aztreonam 30 µg Հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1	հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում

				քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:							
5	33691166/5	piperacillin 30 µg	Lioflchem	piperacillin 30 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
6	33691166/6	penicillin 1U	Lioflchem	penicillin 1U հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ: Եվրոպական արտադրության ,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
7	33691166/7	Meropenem 10 µg	Lioflchem	Meropenem 10 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
8	33691166/8	Ciprpfloxacin 5 µg	Lioflchem	Ciprpfloxacin 5 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական	հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում

				արտադրության կամ համարժեք,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:							
9	33691166/9	Norfloxacin 10 μg	Lioflchem	Norfloxacin 10 μg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար: Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ: Եվրոպական արտադրության ,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
10	33691166/10	Moxifloxacin 5 μg	Lioflchem	Moxifloxacin 5 μg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ: Եվրոպական արտադրության կամ համարժեք,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
11	33691166/11	Cefotaxime 5 μg	Lioflchem	Cefotaxime 5 μg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության կամ համարժեք,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
12	33691166/12	Cefuroxime 30 μg	Lioflchem	Cefuroxime 30 μg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի անտիբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար: Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ: Եվրոպական արտադրության կամ համրժեք,CE, ISO 9001,	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում

				13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:							
13	33691166/13	Ceftazidime 10 µg	Lioflchem	Ceftazidime 10 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար: Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ: Եվրոպական արտադրության կամ համարժեք,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
14	33691166/14	Cefixime 5 µg	Lioflchem	Cefixime 5 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության կամ համարժեք,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
15	33691166/15	Cefazolin 30 µg	Lioflchem	Cefazolin 30 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար: Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ: Եվրոպական արտադրությանկամ համարժեք,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
16	33691166/16	Cefoxitine 30 µg	Lioflchem	Cefoxitine 30 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում

17	33691166/17	Gentamicin 10 µg	Lioflchem	Gentamicin 10 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
18	33691166/18	Sulfamethoxazole/trimethoprim 25 µg	Lioflchem	Sulfamethoxazole/trimethoprim 25 µg հակաբիոտիկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակաբիոտիկով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
19	33691166/19	Nystatin 100 µg	Lioflchem	Nystatin 100 µg հակասնկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակասնկային պրեպարատով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության կամ համարժեք,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
20	33691166/20	Fluconazole 100 µg	Lioflchem	Fluconazole 100 µg հակասնկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակասնկային պրեպարատով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում

21	33691166/21	Clotrimazole 50 µg	Lioflchem	Clotrimazole 50 µg հակասնկային սկավառակներ ներծծված համապատասխան կոնցենտրացիայի հակասնկային պրեպարատով, նախատեսված հակաբիոտիկային զգայունության որոշման համար:Ֆորմատը՝ քարթրիջ՝50-ական սկավառակով յուրաքանչյուր քարթրիջում: 1 քարթրիջը (50 սկավառակով)՝1 հատ:Եվրոպական արտադրության,CE, ISO 9001, 13485 և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար:խմբաքանակի համար:	հատ	1600	1600	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
22	33691166/22	Legionella BCYE growth supplement	Lioflchem	L-ցիստեին -40մգ,ֆեռոիկ պիրոֆոսֆատ-25մգ,ACES-1գ, պոտաշիում հիդրոքսիդ -200մգ Լ-կետոգլուտարատ-01.գ:Տուփում 10 սովակ:ռեֆ.81056:՝Նշանադրումը՝ ֆիրմային նշանի առկայությունը, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3առկայություն,պահպանման պայմանները պահել չոր տեղում:	տուփ	50000	200000	4	Կոմիտաս49/4	4	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
23	33691166/23	Legionella Latex KIT 50 tests	Lioflchem	Legionella Species Latex Reagent, Legionella positive Control, Legionella 1 latex Reagent, Legionella 2-15 latex Reagent:Տուփում՝50 թեստ:Ռեֆ.96142: նշանադրումը՝ ֆիրմային նշանի առկայությունը, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3առկայություն, պահպանման պայմանները պահել չոր տեղում	տուփ	225000	225000	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
24	33691166/24	Legionella GVPC supplement 10 vials REF 81008	Lioflchem	81008-Հավելում ընտրողական՝ լեգիոնելաների աճեցման համար: Հավելումը նախատեսված է լեգիոնելաների ընտրողական աճի համար: Սրվակներով, 1 սրվակը նախատեսված է 100 մլ միջավայրի համար: Տուփում՝Բաղադրությունը 1 սրվակ:Սրվակ՝ գլիցին-1,5 գ, վանկոմիցին հիդրոքլորիդ- 0,5 մգ, պոլիմիքսին Բ - 40000 ԱՄ , ցիկլոհեքսիմիդ- 40 մգ,.Պիտանելիության ժամկետն առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին, ընդհանուր ժամկետը՝ նվազագույնը՝ 2 տարի, փաթեթավորումը՝ գործարանային հերմետիկ փաթեթավորմամբ և գործարանային պիտակավորումով , ունենա խմբաքանակի և ապրանքանիշային ծածկագրեր, արտադրողի կողմից պիտանելիության ժամկետի հստակ նշումներով: Խմբաքանակը կրի հստակ ծածկագիր,	Տուփ	46000	46000	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում

				ամբողջությամբ լինի միատեսակ (ժամկետի, արտադրողի և փաթեթավորման առումով) և ունենա արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող որակի հավաստագիր: Արտադրությունն ունենա որակին ներկայացվող միջազգային ԻՍՕ ստանդարտներին համապատասխանություն և հավաստագրեր (ISO 13485-, 9001, CE և/կամ IVD)							
25	33691166/25	O.A.Listeria supplement 4+4 vials	LIoflchem	պարունակում է 4x20 մլ սրվակ հարստացնող հավելում (պարունակությունը՝ L-α-ֆոսֆատիդիլ ինոսիտոլ 1 գ), 4 սրվակ խորը սառեցված սելեկտիվ հավելում (պարունակությունը՝նալիդիքսաթթու-10մգ, ցեֆտազիդիմ-10մգ, ցիկլոհեքսիմիդ-25 մգ և Պոլիմիքսին Բ- 38350 IU) և օգտագործման ուղեցույց: Պահպանել 2-8oC ջերմաստիճանում:Արտադրանքը պետք է լինի եվրոպական արտադրության պետք է ունենա ISO 9001, 13485 հավաստագրեր և որակի հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի համար: Պարտադիր է ֆիրմային նշանի առկայությունը՝ «Liofilchem » :81074 կամ համարժեք:	հավաք	71000	71000	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
26	33691166/26	Listeria Fraiser broth 500 g	Lioflchem	Միջավայր Listeria spp-ի երկրորդային հարստացման համար: Բաղադրությունը գ/լ. Տրիպտոն 5,0, պեպտոն 5,0, լիթիումի քլորիդ 3,0, մսային էքստրակտ 5,0, խմորասնկային էստրակտ 5,0, նատրիումի քլորիդ 20,0, նատրիումի անհիդրիդային ֆոսֆատ 9,5, կալիումի ֆոսֆատ 1,35, էսկուլին 1,0, նալիդիկսիլային թթու 0,02, ակրիֆլավին 0,025, վերջնական pH=7.4 ± 0.2: Ֆորմատը՝ 500 գրամանոց պլաստիկ տարաներով: Արտադրանքը պետք է ունենա ISO 9001, ISO 13485, որակի սերտիֆիկատ յուրաքանչյուր խմբաքանակի համար, CE, IVD: Պետք է լինի եվրոպական արտադրության կամ համարժեք:	տուփ	45000	45000	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
27	33691166/27	API Coryne (bioMerieux SA)	BioMerieux	Նույնականացնող համակարգ, պարունակում է 12-ստրիպ,12-ամպուլա API GP միջավայր,12-ամպուլա սուսպենզիոն միջավայր,1-Mc-Farland 6-ստանդարտ;12-ինկուբացիոն բոքսեր,12-բլանկ պատասխանի:Նշանադրումը՝ ֆիրմային նշանի	հավաքածու	95000	95000	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում

				առկայությունը, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3առկայություն,պահպանման պայմանները պահել չոր տեղում							
28	33691166/28	Реагенты для API Coryne (bioMerieux SA)	BioMerieux	NIT1-2հատ*5մլ,NIT 2 2հատ*5մլ, PYZ-2հատ*5մլ , ZYM B-2հատ*8մլ , ZYM A-2հատ*5մլՆշանադրումը՝ ֆիրմային նշանի առկայությունը, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3առկայություն,պահպանման պայմանները պահել չոր տեղում	հավաք	70000	70000	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում
30	33691166/29	Նմուշառման տարողություն ձողիկով Ամիես միջավայրով, առանց ածուխի	Lioflchem	Նմուշառման տարողություն ձողիկով Ամիես միջավայրով, առանց ածուխի: Տուփում՝100 հատ:	տուփ	22700	22700	1	Կոմիտաս49/4	1	մատակարարումը՝պայմանագիր կնքելուց հետո 30օրվա ընթացքում

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»ՓԲԸ
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ 00011624
Բանկ «Հայէկոնոմբանկ» Կոտայքի մ/ճ
հ/հ 16305810144

Տնօրեն Ս.Բազարչյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան, Արզումանյան 32-10
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095
էլ. հասցեն՝ lawyer@c-e.am
Հեռ. (010)209777

Տնօրեն Բ. Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.S

Հավելված N 2
«24» փետրվարի 2020 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-20/4»-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-30	33691166/1-33691166/30, 38431491/1	Մանրէաբանական միջավայրեր	... %	... %	... %	404150	404150	808300	... %	... %	... %	... %	... %	... %	808300

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝ 00011624
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»Արաբկիր մ/ճ
h/h 163058101441

Տնօրեն ---------------------- Ա.Բազարչյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան, Արզումանյան 32-10
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095
էլ. հասցեն՝ lawyer@c-e.am
Հեռ. (010)209777

Տնօրեն ---------------------- Բ. Թամոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«24» փետրվարի 2020 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-20/4»-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան, Արզումանյան 32-10
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095
Էլ. հասցեն՝ lawyer@c-e.am
Հեռ. (010)209777

Պատվիրատու
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի
անվան առողջապահության ազգային ինստիտուտ»ՓԲԸ
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝ 00011624
Բանկ՝«Հայէկոնոմբանկ»Արաբկիր մ/ճ
հ/հ՝ 163058101441

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» փետրվարի 2020 թ.
Պայմանագրի համարը՝ **«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-20/4»-1**
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«24» փետրվարի 2020 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-20/4»-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «___» փետրվարի 2020 թ.-ին կնքված N **«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-20/4»-1** պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն